

Հ. Ա. ԱՆԱՊՅՈՒ

(ՀՍԽԲ Գիտությունների ակադեմիայի
Գառաքարյան ինստիտուտի գիտաշխատող)

ԳԻՏՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՓԱՆՈՍ ՍԵԼՄԵՍԵՑՅՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍԵՐՅԱԼ*

Այս զիասկոթյունները մեզ բերում են եզրակացնելու ազգակարանը՝ յի կարող վերաբերվել 1562 թվականին։ Մնում է միայն բնույնել, որ մի վեպ և անդի ունեցել նրա թվականի մեջ, որը նշանակված է հայկական տառերով՝ «ԾմԱ»։ Այս երեք տառերից միշտնը՝ «Ժա-ն», մեր կարծիքով ավելորդ է։ Եատ հավանական է, որ Կամեննեցյան տարեզրության կազմովը, որը մեր այս թվականներից շատ հետո է տարբել, աշքի վրիաման հնտեսանքով ինքն է ավելացրել այդ մի տառը՝ հիշատակարանները սկզբնագրից բնորինակելիս, թեև հնարավոր է նաև, որ հիշատակարանի հնդիւնակն ինքն էլ կատարած լինի այդպիսի մի սխալ՝ պարզապես ուշադրության և ձեռքի վրիամանով։ Գրչազրերով զրազվողներին հայտնի են ձեռագրերից նմանօրինակ շատ դեպքեր³⁵։ Ուստի պեսք է սրբազրել թվականը և կարգալ «ԾմԱ», որ կլինի 1552։ Այս սիստով հիշատակարանի բովանդակությունը դառձ կլինի իր տեղը և սրանով կամեննեցյան տարեզրության այս հատվածում մենք կունենանք մի ժամանակակից հիշատակություն այն այցելության մասին, որ Ստեփանոս Սալմաստեցին տվել է կենացայ գաղութին, Հոռմից վերապարձին։ Եվ արդեն հավանորեն այդ մասին, այսինքն կաթողիկ Հոռմի ձանապարհի մասին են հիշատակա-

* Հարուսեակած ամսագրի 1936 թվականի N VIII—IX-ից։

35. Այսպիսի դեպքեր պատահում են նաև տպագիր գրքերում։ Օրինակ՝ Դաշնաց թղթի 1690 թվականի վճենտիկան տպագրության նոկասում դրոշմած ենք շահում N DCLNC, որի մեջ L տառը ավելորդ է (հմմտ. Հ. Ա. Ղազիկյան, «Հայկական նոր մատենադրություն», Հատ. Ա. Վենետիկ, 1909, էջ 793,

բանի այն խոսքերը, թե նա եկել է ոստոյք և նշմարիա (!!!) հանապարհաւա, այլապես այս բառերը՝ «ստոյք» և «նշմարիա», որոնք զուտ բարոյական նկարագիր ունեն և բնակչն կարող գործածված լինել Պարսկաստանից կամ Թյուրքիայից դեպի Լեհաստան տանող հանապարհների ապահովությունը ցույց տալու համար, կմնային անհասկանալի, և ըստ երեսություն մամանակի քաղաքական երազանքներուվ տարլուղ հիշատակագիրը, իրազեկ լինելով կաթողիկոսի ուղևորության շարժառիթին ու պարագաներին, այդ անորոշ, բայց շատ ընորոշ ու նշանակալից արտահայտությամբ քավականացել է արձանագրել պատմական իրողությունը, որի մասին նարավոր չեր ավելին գրել մի հասարակ ձեռագրի հիշատակարանում։

Արդ, համազրելով այս հիշատակարանի բովանդակությունը, որն, անտարակույս, Ստեփանոս Սալմաստեցին է վերաբերում, այն իրողության հետ, թե հիշատակարանում կաթողիկոսը կոչվում է Արքնչնցի, մենք, իրոք, գալիս ենք այն համոզման, թե Ստեփանոս Սալմաստեցին և Ստեփանոս Արքնչնցին միենույն անձնավորությունն են։

Ստեփանոս Սալմաստեցին ո՞րեւելից առած պիտի լիներ այս Արքնչնցի մականունը։

Ստեփանոս Սալմաստեցին, նախքան իր կաթողիկոսությունը, մի ժամանակ գտնվել և ուսուցել էր Մաղարթի Ս. Ստեփանոս վանքում։ Այդ մասին մենք գիտենք էշմիածնի Գրիգոր ԺԱ Բյուզանդացի կաթողիկոսի 1541 թվակիր մի կոնդակից, որով նա վանքի միարաներից Աթանաս վարդապետին առաջնորդ հաստատելով նույն վանքին, նրա

մասին գրում է, «որ է սնեալ և վարժեալ ի Սուրբ Նախավկայի վանքն և ուսեալ էր դիմաստ կրթական ի ձեռն Ստեփանոսի քաջ բարունապետի Սալմաստեցը»³⁹: Մաղարթի վանքը, որը Նախիշեամի ամենահզուշակավոր վանքն էր, գտնվում էր Արաքսի աջ ափին, Շամբի ձորում, իսկ Արաքսի ձախ ափից դեպի հյուսիս տարածվում էր Երնջակի վալվարք, որի մի մասը այս վանքի թեմին էր պատկանում: Իսկ վերջին դարերում Մաղարթի վանքը նույնիսկ Երնջակի վալվառի վանքի մեջ էր հաշվվաւ: Այսպես ևնք գտնում, օրինակ, Երևանի թեմի վանքի այն ցուցակում, որ Մեսրոպ վարդապետ Սարատյանցը կազմել է 1870 թվականին Գեորգ Գի Շամանովի⁴⁰: Արդ, Ստեփանոս Սալմաստեցին պետք է Երնջակի այս նշանավոր վանքից ժառանգած լինի Արքնչեցի մականունը: Այս շրջանում պատմական հին Երնջակի անունն արդեն աղճատվել էր: Հ. Ալիշանը նշում է, որ «ունի ի յետին զարուց քրաց կոչէ և Արքնջակի զգաւառն, ոչ գիտեմ ըստ արտասանութեան ևմէ սիսալզգութեամբ»⁴¹: Երնջակի-ի Արքնջակի զառնալն, ինարկե, ոչ սիսալզգությամբ, այլ բայտ արտասանության էր, թուորք-թաթարական աղդեցությամբ: Այսոր ևս տեղական ազրբեջանական բարբառով Երնջակը կոչվում է Ալընչա⁴², մի ձե, որ գտնում ենք գեռ առնվազն ժե դարից օտար ուղեգիրների մոտ ևս: Վենետիկցից Հոգափառ Բարրարոն (ժե դ.) ունի Ալընչա, Ալինչա⁴³, Սպանիացի Ռույ Գոնցակց Կրամիխոյի (ժե դ.) մոտ գտնում ենք Ալանչիկ⁴⁴ ձեռվ: Խտայական մի անանուն ուղեգրի (ժե դ.) մոտ գտնում ենք Ալանչա⁴⁵ ձեռվ և այլն: Ուրիմն, Ստեփանոս Սալմաստեցին, որը կոչվում էր և Կոստանդնուպոլիսից, Երնջակի այս հետնագրյան Ալընչա, Ալինչա կոչումից ստացած սիստի լիներ նաև հայկական ձեռվ Արքնչեցի:

39. Մեսրոպ արքեպիսկ. Սմբատյանց, «Նկարագիր Արքը Կարապետի վանից Երնջակայ և շրջակալից Նորա», Թիֆլիս, 1904, էջ 414:

40. Խոյն տեղում, էջ 487:

41. Հ. Ալիշան, «Սիսական», Վենետիկ, 1893, էջ 350:

42. Հ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, անտարեթիվ, էջ 80:

43. Հ. Հակոբյան, «Ուղեգրություններ», Հատ. Ա, Երևան, 1932, էջ 206: Այսուղե թարրարոն Ալընչա անունը հիշել է որպես անձնանուն, որպես Երնջակի ունիտորական (ժամարարական) վանքի առաջնորդի անունը, իբր Ալընչեցի, այսինքն՝ Արքնչեցի:

44. Խոյն տեղում, էջ 116:

45. Խոյն տեղում, էջ 325: Հմմտ. նաև էջ 324, ձան.

մականունը, իբր Ալընչեցի, ճիշտ այնպէս, ինչպես համեմատվում է Արքնչա(կ) — Ալինչա:

Ստեփանոսի այս Արքնչեցի մականունը հիշատակարաններից մի քանիսում ուղղագրված է Արքնչեցի, անշուշտ մի կողմից ըստ այն կանոնի, թե ն-ից առաջ բ-ն փոխվում է ո-ի, իսկ մյուս կողմից՝ արդեն ծանոթ Ալինչ, Արքնչեցի ձևի ազդեցության տակ:

Կարող է առարկություն լինել այն մասին, թե մի հայտնի անձնավորություն, որպիսին էր Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսը, կոչվեր զանազան անուններով: Բայց արդպիսի առարկության գեմ խոսում են շատ գեղքերու Այսպես, օրինակ, ձեռագրերից մեզ ծանոթ է մի տաղերդու, որն իր առաջերում իրեն անվանում է Արքահամ Բաղիշեցի⁴⁶, հնագործել տալով, թե ինքը ծննդով բաղիշեցի է: Այս անձը 1730—1734 թվականներին հայոց կաթողիկոս լինելով, երբեմն կոչվել է գարձալ իր նախակին մականունով Բաղիշեցի⁴⁷. Երբեմն նրան կոչել են Խոչարեցի՝ ծննդով համարելով վանի Խոշար վուղից, Քրիստոնեցի՝ համարելով, որ Խոշարը Քրդիստանում է, Կողմացի՝ համարելով, որ Քրդիստանը հայկական հին Կորպուսն է, և վերջապես նրան անվանել են Մշեցի, այն պատճառով, որ նա Մուշի Սկարապետ վանքի առաջնորդն էր եղել նախքան իր կաթողիկոսությունը⁴⁸: Կարծում ենք, որ այս օրինակը բավարար է:

Ի միջի այսոց ասենք, որ Սալմաստեցու և Արքնչեցու տարրեր անձեր լինելն հաստատող ոչ մի փաստական տվյալ չկատ: Դավրմանցուց հետո, այս նպատակով մենք դիմել ենք նաև Սալմաստեցու ժամանակաշրջանը պարունակող մի քանի անախուց գավազանագրերի, որոնք սակայն ոչ մի նորություն չեն ապահով այս մասին, որովհետեւ նրանք բոլորն էլ կապ ունենալով Դավրմանց ցանկի հետ և կամ միմյանց հետ, առանձին են

46. Տի՛ Հայկական ՍՍԾ Պետ. մատեն.-ի ձեռ. № 5954, էջ 5ա, 7ա, 76թ, 78ա, 78թ, 79թ և 82թ:

47. Արքահամ Կոստանդնուպոլիսեցին Դիոնիսիոս Արքապագացու գործերի հայկական մեկնաբանությունների ժողովածուն է կազմում 1733 թվականին, «ի հայրապետութեան Տեսուն Արքահամու Բիղիշեցու» (տե՛ս Հայկական ՍՍԾ Պետ. մատեն.-ի ձեռ. № 97): Գեորգ Միհելիիմի «Դիորք վիճաբանութեան ընդգէմ երկարնակաց» ապագիր գրքի ճակատում նշված է՝ «ի վեհապետութեան իմաստափառ և սրբազն Բաղիշեցի Տեսուն Արքահամու կաթողիկոսին», տպ. Կոստանդնուպոլիս, 1734 թ.:

48. Հ. Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», Հատ.

9, էջ 805:

նշում Ստեփանոս Սալմաստեցի և Ստեփանոս Արքանցեցի Արտաս, օրինակ՝ Հայկան ՍՍՌ Պետական մատենագրանի № 1721 ձեռադիրը, որ գրված է 1696 թվականին, այս մասում կետ առ կետ և բառ առ բառ նույն է Գավրիժեցու հետ, և անտարակույս նրանից է վերցրել⁴⁹, № 8184 ձեռադիրը, որ Գավրիժեցուն ժամանակակից Հայկանցու պարագանեցու անխորապիր ժամանակագրությունն է պարանակում, ներկայացնում է մինչեւ տվյալները⁵⁰, № 1492 ձեռադիրը, որ Ավետիս Տիգրանակերտացու գավազանադիրն է գրված է 1715 թվականին, կազմը գած է Գավրիժեցու ցանկի հետևողությամբ, բայց հեղինակը Գավրիժեցու տված թվական ցուցմունքները սխալ է մենարանել այսուեղ և, բայց այնու ցանկանալով նշել յուրաքանչյուր կաթողիկոսի գահակալության սկիզբն ու վերը, Ստեփանոս Սալմաստեցուն զնում է 1541—1566 թվականներին, մերժին թիվը հիմնելով այն տվյալի վրա, թիվաշորդ 1567 թվականին Գավրիժեցու մոտ Ստեփանոս Արքանցեցին է հիշատակվում. և այս ձեռվ նաև Ստեփանոս Արքանցեցուն զնում է նաև 1567—1575 թվականներին, վերջին թիվը հիմնելով այն բանի վրա, որ Գավրիժեցու մոտ հաջորդ 1576 թվականին նշված կաթողիկոսների շարքին այլև չի գտնվում Ստեփանոս Արքանցեցու անունը⁵¹. Սրանից սրոց շափով անկախ է երեսում № 482 ձեռադիրը, որը Ստեփանոս Սալմաստեցու կաթողիկոսությունը զնում է 1541 թվականին, նրան տալով 16 տարի իշխանություն, իսկ Ստեփանոս Արքանցեցու կաթողիկոսությունը զնում է 1575 թվականին, նրան տալով 2 տարի իշխանություն⁵², բայց որքան էլ անկախ եղած լինի, կասկած չկա, որ այս գավազանագրի անանուն հեղինակն էլ ձեռքի տակ որպես հիմք ունեցել է մի ցանկ այն սիստեմով կազմված, ինչ սիստեմով որ կազմը ված է Գավրիժեցունը: Այս գավազանագրերը, որոնք ուշ ժամանակի աղբյուրներ են, փաստական ոչինչ չեն պարունակում այս մասին, թե Ստեփանոս Արքանցեցին տարրեր անձեր են:

49. «Կարգ և թիվը կաթողիկոսաց և ամք նոցա», Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռ. № 1721, էջ 134թ—135ա:

50. Տե՛ս Հակոբ Կարենցու ժամանակագրության կից՝ կաթողիկոսների գավազանագրերը, Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռ. № 8184, էջ 55թ:

51. Տե՛ս Ավետիս Տիգրանակերտացու «Գիրք պատմութեան» որ կոչի Գաւազանագրերը, Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռ. № 1492, էջ 211թ—212ա:

52. «Ստամեաւոր ժամանակագրութիւն և գաւազանագրեր», Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռ. № 482, էջ 46թ—47ա:

դած լինեն թայց Ստեփանոս Արքանցեցու մասին, որպես առանձին կաթողիկոսի, աիրող կաթողիքը այսպիսի գավազանագրերի հետեւութիւնը է առաջ եկել Մինչի անգամ Չամչյանի և Ալիշանի նման պատմագրները, որոնք առաջ նյութ են օգտագործել իրենց աշխատաթյունների համար, այս կետում, որից ապրյունների շնորհիքան պատճառով, զավագնագրերերի ընձեռած այսպիսի աղոտ ցուցմունքները անտեսած վիճակում մտահոգությամբ է միամն, որ իրենց կազմած ցանկերի մեջ «Ստեփանոս Արքանցեցի» անունը ըստ կարգի տեսագործել են, իրեն առանձին կաթողիկոս, իրեն Ստեփանոս Զ. Չամչյանը ոչինչ չի ունեցել գրելու նրա մասին և միայն առում է. «Տէ՛ր Ստեփանոս վեցերորդ՝ ամս թա, և այդպես էլ անց է կացը իւ ժամանակագրական աղյուսակի մեջ»⁵³: Ալիշանը նույնպես նա բավականացել է իր գավազանացանկում նշելով այսպես «Ստեփանոս Զ. Արքանցեցի», ինչի յուսաքիւ և յալլէ ի Ամք թուիւ⁵⁴:

Արդ, ընդունելով այդ երկու անունների նախնականները, մենք անումում ենք, որ 60-ական թվականներին շարութակվում է Սալմաստեցու կաթողիկոսության հիշատակությունը զանազան հիշատակարաններում:

1563 թվականի իւթեարքարին Թուան երեսը կիովում ընդօրինակում է Պողոս առաքյալի թղթերը և Հովհաննեսի Հայունությունը⁵⁵ [ի] Հայրապետութեան Տեան Տէ՛ր Աղիանոսի կաթողիկոսի Արքանցեցույ⁵⁶:

1564 թվականին Կաֆայում մի դրիչ հիշատակում է «Ստեփանոս»-ին, որպես ժամանակական կաթողիկոսությունը է Հիւշանը⁵⁷:

1565 թվականին Մինաս Տիվրիկցին կիովում ընդօրինակում է մի պարզատումար ոչի կաթողիկոսութեան Սուրբ էջմիածնի, Տէ՛ր Ստեփանոսի Անձեցույ⁵⁸:

Նույն թվականին Մինաս նոտարը (Տիվրիկցի?) կիովում ավարտում է ընդօրինակությունը եփերմ Ասորու քարոզների [ի] Հայրապետութեան Տէ՛ր Տէ՛ր Ստեփանոս կաթողիկոսի Արքանցեցույ⁵⁹:

55. Զ. Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», Հատ. Դ, էջ 523. և Հավելվածում էջ 97:

56. Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 231:

57. «Հանդէս ամօրեայ», 1936 թ., էջ 509; Տէ՛ր նաև «Revue des études arménianes» VII, 1927, թ. 128, 129.

58. Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 230, Ժան. 5:

59. Հ. Ղ. Տաշյան, «Ծուցակ՝ Հայերէն ձեռագրաց Կայսերական մատենագրաների վեհենաց, Վիճնեա», 1891, էջ 38:

60. «Revue des études arménianes», I, 1920, թ. 113.

1566 թվականին Կամենեցի հայոց Ս. Նիկողայոս եկեղեցու հիշատակարանում գիշում է որպես հայոց կաթողիկոս «Տէր Ստեփանոս-ը»⁵⁹:

1567 թվականին Տիվրիկցի մի զրիչ, որ հավանորն վերոհիշալ Մինաս Տիվրիկցին է, կովում ընդօրինակում է մի Սաղմոսարան որ կաթողիկոսութեան Սուրբ էջմիածնի Տէր Ստեփանոսի Առքննեցուք»⁶⁰:

Իսկ այս նույն թվականին արդեն Դավրիծեցին էլ էր հիշատակում Ստեփանոս Սալմասանուն:

Այսպիսով, ուրեմն, մենք համարում ենք իրողություն, որ Ստեփանոս Սալմասանեցին 1551—1552 թվականներից հետո գեռ երկար տարիներ գտնվել էր կաթողիկոսական Աթոռի վրա, գուցե և ընդհատումներով, հակառակ չենք. իսկ ամեն պարագայի, մի բան միշտ անվիճելի է, այն, որ Դավրիծեցու մոտ հիշատակված 1557 թվականին, առնվազն այս թվականին, տակալին կենդանի էր Ստեփանոս Սալմասանեցին: Այս մասին ավելորդ է երկարելց: Ուստի, կանգ առնելով ոլուսեղ, գանք այն խնդրին, թե ի՞նչ արժեք էն ներկայացնում Ստեփանոս Սալմասանեցու կովում մեռած ու թաղված լինելուն վերաբերող տվյալները:

Մատենագրական վկայություններից՝ ժը դարի հեղինակ Ստեփանոս Ռոշքայի ժամանակագրությունը ինքնին ոչ մի արժեք չի ներկայացնում այս մասին: Ռոշքայի խոսրեն ուրիշ բան չին, եթե ոչ տապանաբարի մեկնաբանությունը, որի համաձայն Ստեփանոս կաթողիկոսը «կամ ընկեցեալ յաթոռոյն, կամ իրովի թողեալ, երթայ ի Հոօմօ, և քանի որ Հոօմօ է զնում և այնուեղից է գալիս, կաթողիկ Ռոշքայի համար շատ հանկան բան էր, որ կաթողիկոսը «կատարեալ զննազանդութիւն և զուխտն իր գայ ի էկոպլիս», որտեղ և «մենամի յայսմ ամի», այսինքն՝ 1551 թվականին, և այս բոլորը՝ «որպէս ցուցանէ դերեզմանաբարին նորա գիրն»⁶¹: Ռոշքայի այս հատվածն, ուրիմն, որպէս աղբյուր, դուրս է գալիս շարքից:

Իսկ մատենագրական մյուս վկայությունը, որ Կամենեցյան տարեգրությունն է տալիս, և կովի տապանաբարը իրենց ծագումով մինույն ժամանակի և շարքի են պատկանում:

59. Հ. Ս. Բժշկյան, «Ժամանակաբորբոքմիւն ի էկուստան», Վենետիկ, 1830, էջ 143:

60. Հ. Հ. Տաշյան «Յուցակ հայերէն ձեռագույա Կայսերական ժամանակարանին ի Վիեննա», էջ 22; Տե՛ս նաև «Կամենեց», էջ 164:

61. «Կամենեց», էջ 135:

Համ Կամենեցյան տարեգրության, ինչպես վիտենք, Սալմասանեցին չեկն ի Ֆուանգիստանու ի լով քաղաքն և անդ վաղճանեցաւ⁶²:

Զգիտենք, թե տարեգրությունը որտեղից է վերցրել այդ տեղեկությունը, բայց այս հարցի պատասխանը կարելի է որոնել այն հարցի մեջ, թե ինչպես է կազմվել Կամենեցյան տարեգրությունը որպես ամբողջություն:

Կամենեցյան տարեգրությունը կազմել են Կամենեցի ավագիրեցները⁶³: Նրա առաջին ժամանակ կաղմող Հովհաննես բահանան ավագիրեցություն է արել 29 տարի⁶⁴, սկսած 1577 թվականից⁶⁵, որով նա հեղինակն է միայն 1577—1605 թվականների շրջանի գեպքերի. ուստի՝ 1577 թվականից առաջվա դեպքերը ուրիշ աղբյուրներից են: Մի ուշադիր ակնարկ բավական է արդեն հաստատելու համար այդ: Օրինակ՝ կրկնության դպքերը: Այսպիսս, խոսելով Մոլգավիայի դեպքերի մասին, 1560 տարեթիվի տակ գումար է, «Ոմն Տեսրոթ անուն յայտնեցաւ և այլն»⁶⁶. իսկ աշորդ 1561 տարեթիվի տակ նա սկսում է նորից նոր խոսել նույն Դևսպոտի մասին. «Ոմն Տեսրոթ անուն գուրս յայտնեցաւ և այլն»⁶⁷, Այսպես նաև 1562 տարեթիվի տակ դրված երկու տարրեր հատվածները, որոնք կրկնողաբար Կամենեցի լատին հպիսկոպու կենարու Ալունչովսկու մաշվան մասին են խոսում⁶⁸: Կրկնությունները ցուց են տալիս, որ նույն տեղեկությունները քաղված են տարբեր տեղերից, գուցե տարբեր ժամանակներում, ուստի և տարբեր ձեռքբերով: Նույնը պիտի ասել Տարեգրության մեջ դուռվող հակասությունների մասին, որոնցից ամենազիստը հենց այն իսկ է, որ մինչև 1552 տարեթիվի տակ, մեր կողմից խնդրո առարկա հատվածում, Ստեփանոս Սալմասանեցու մասին ասվում է, թե նա տեկն ի Ֆուանգիստանու ի լով քաղաքն».

62. Նույն տեղում, էջ 19:

63. Տե՛ս Ալիշանի տեղեկությունը, նույն տեղում, էջ 3:

64. Նույն տեղում, էջ 67:

65. Նույն տեղում, էջ 136:

66. Նույն տեղում, էջ 19:

67. Նույն տեղում, էջ 23:

68. Նույն տեղում, էջ 30:

Տարեգրությունում նույնպես ուրիշ աղբյուրից պիտի լինի:

Հաստ ինքյան վարժանալի ոչխնչ ըկա, ևին մհնք փոխառություններ ենք զանում 1577 թվականին զրել սկսող մի հեղինակի երկուամ, որի բովանդակությունը հասնում է առնվազն մեծ դարի սկիզբը: Դա շատ էլ բնական է: Առաջայն այստեղ կա ուրիշ հարց: Այստեղ սկսափող եկամուտ տարրերը արդյոք նույնինքն Հովհաննես քահանացի՝ կողմից կատարված փոխառություններն են, թե հետազարում մի այլ խմբագրովի կողմից կատարված նկրություններ: Սա կարենոր պարզ է:

Կամենեցյան տարեգրությունն արնակու, ինչպես կա այսօր նա մեր տրամադրության տակ Հ. Պ. Ալիշանի քատարակությամբ, ինքնին շատ վստահելի հանդամանքներ չի ներկայացնում: Նախ՝ բնագրի ձեռագիրը, որը Վենետիկի Միաթմարտն մատենագրարանում է գտնվում, անմիտմար վիճակ ունի: Բացի առաջին թերթից, պակասում են նաև միշտ շատ թերթեր: Եյտմերը միշտ չեն հետևում ժամանակագրական ուղղի կարգի, այլ ցրված են ետ ու առաջ, որով քատարակիցն ստիպված է եղել ժամանակացրական զասափրում կատարել⁶⁹: Հետո՝ Տարեգրության ամրոցությունը մի շարք հարու հանաւակների գործ է: Տեր Հովհաննեսից հետո ժամանակագրությունը, 1605—1611 թ. թ. շարունակել է մի անձանոթ ձեռք Ազար՝ թաթարերին (զիշաղերին) լիդվով շարունակել են նույն Տեր Հովհաննեսի թոռներ Տեր Հակոռը և Տեր Օքսնոր 1611—1624 թ. ⁷⁰, որից հետո 25 տարիվ մի բաց է մնացել, մինչև որ 1649—1652 թվականներին հաւերին լիդվով շարունակել են զարձալ անձանոթ ձեռքեր:

Այս հանդամանքներում Տարեգրության առաջին մասում նշվող օտար հատվածները կարող են որբան Հովհաննես քահանայի ձեռքով կատարված փոխառություններ լինել, նույնքան և ավելի հետագա շարունակողների ու խմբագրողների գործ լինել: Գեղ ավելին: Եթե հետազայտով կարող են այլ ձեռքերի կողմից կատարված լինել մուծումներ, կարող են կատարված լինել նաև դիտումնավոր մուծումներ, իսկ որոշ նկատառումներ մեզ թույլ են տալիս շատ բարեմիտ շինել այս խնդրում: Այս խնդրում մեզ օգնության է զալիս ժամանակն ինքը:

Իրոք, ինչա՞նոց պատմության մեջ շատ հետարքերի է այն ժամանակաշրջանը, որին զուգադիպում է Կամենեցյան տարեգրու-

թյան վերջավորությունը, այն է, Փէ: դարի կեսերը:

Մինչ այս ցրցանը կեհասատանի հայ զագութք երմիածնի կամոզիկոսության թիմ էր կեհանայոց առաջնորդները, որոնք կամում էին նատում, մե՞ք դարից սկսած միշտ աշանակում կամ հասատափում էին Ամենամիաց կամ Կամոզիկոսներից և նրանց բարձագաններն էին ենթակա⁷¹: Սակայն մեկ զարում արտակարգ զետքեր ու փոփառություններ են տեղի ունենում ինչա՞նոց կյանքում: Մանր խամփաթյուններ ամրոցը տասնամյակներով ալեկոծում են զագութքի: Այդ խոսվություններն սկսվում են 1626 թվականից, երբ էշմիածնի նախակին կամոզիկոս Մելրիսիթ Գառնեցին, որը պարտաւերերից հարածական կեհասատան էր անցել, կվովամ նիկու Թորոսութիչ անուն արեգային ինչա՞նոց կամոզիկոսում ձեռնապրելով սատան նմա առնել զգաւանութիմ ուղղափառ (այսինքն Հոռմեական) հաւատոյ, ընդդէմ կամաց ժողովրդանն, որ զեռ ևս հերձուածող (այսինքն Հայոց Ազգային նկեղեցու զավանության հետեղոյ) էրը⁷², եվ այս նիկուը, որ հետո, 1630 թվականին հանիբուափառ կրկնում է իր զավանությունը կատին նկեղեցու ներկայացուցիչների առաջ կվովամ⁷³, երկարամյա ու բազմատեսակ խոռվություններով ու բռնություններով իր հոտին տառապեցնելոց հետո վերջապես անշատում է իր թեմը Հայոց Ազգային նկեղեցուց և նեթարկում նրան Հոռմեական նկեղեցուն, առարացման ուղի հարթելով զադութին:

Տեղը չէ այստեղ այդ տիսուր դեպքերի մանրամասնության մեջ մանելի նրանք ծանոթ են արդեն պատմաբաններին: Այստեղ պետք է հիշենք միայն այն պարագան, որ այս երկարամյա պայտքարի ընթացքում, պայքարը, որին հետազայում Հոռմի Պրոպագանդի լատին գործակալներն իրենք լծվեցին անձամբ, ընդդիմացող ժողովրդին համեկերպության բերելու համար միութենականներին հարկ եղավ բանի միջոցների հնտնակ շատ կորով վատնել, որպեսզի նրան հաշացնեինք կատարվող փոփոխության նետ: Այս տեսականից նրանց անհրաժեշտ էր զաղագիքական ուժեղ պայքար, որի մեջ առանաբակ յավ էին մարզված Հռոմի զործակալները: Այսպիսի նրանց ասելով, Հայկական նկեղեցին ոչ թե հերետիկոսական

71. Մելրոս կաթողիկոսի մեջ կոնզակը 1385 թվականի Գրիգոր նպիսկոպոսին կըսվի Հայոց առաջինորդը և հաշմակում, անոն Կամենեցը, էջ 5—8:

72. Խոյն տեղում, էջ 127:

73. Խոյն տեղում, էջ 128:

69. Հմմտ, «Խամենից», էջ 2—3:

70. Հմմտ, Խոյն տեղում, էջ 3 և 67:

եկեղեցի էր, այլ հերձվածող (բաժանված) եկեղեցի, ինչ որ նշանակում էր, թե նա մի ժամանակ անդամ էր. եղել քրիստոնեական Ընդհանուր եկեղեցու, որի կենտրոնը, ըստ Իրանց, եղել է միշտ Հռոմը, և հնտեսարար, նրանք պարուականություն էին համարում այս անշատված եկեղեցում ամեն զնով վերամիավորել «ընդհանրական» (աւտինք Հռոմեական) եկեղեցու հետ⁷⁴, Այս էր առհասարակ հայոց մեջ ամրող հոգմենական քարոզության առանցքը և դարձալ այս դոլ էր տարվում քարոզությունը նաև յեշանաւոց մեջ: Ըստ Փրանսիացի թեատինյան կրոնափոր Լուդովիկ Պիտուի, որը յեշանաւոց համար նշանակված առաքելության և վլուի հայոց պատահան դպրանոցի զեկավարն էր, Հայկական եկեղեցուն Գրիգոր Լուսավորությունից մինչև ներսին Բ Աշտարակեանն (Դ—Զ դ. դ.) միության մեջ էր եղել Ընդհանրական եկեղեցու հետ⁷⁵. իսկ Վարդան Հռոմեանան արքեպիսկոպոսու, որ հնտեսագայում նեկուին հաջորդես կլուի առանձորգության մեջ, ասում էր, թե Հռոմում, Պրոպագանդայի դիմանում իրեն ուսւու ևն տվել հայերի կողմից զրված բազմաթիվ նամակներ ու կաթողիկոսաց, յահանկապասադ և յասոց⁷⁶: Աւսպիս ուսուին մեծ նշանակություն ուներ պատմական անցյալը Ժէ դարում լեհանայոց մեջ տարվող նոր շարժման գաղափարական հիմնափրամն համար: Ըստ ալյոմ, իշարկե, շատ հայտնի մարդիկ էին րոնի Հռոմի ճանապարհը, սկսած կաթողիկոսներից, և զրանց մեջ չէր եղել նաև Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսը: Եթե վիրշինս Հռոմում գտնված միջոցին իր գործի հաջողության համար ստիպված էր եղել ստորագրել մի դավանագիր, ինչ որ անհամանական չէ, — որովհետեւ Հռոմում այդ անել էին տախիս նման պարագաներում, — այդ փաստաթուղթը նոր շարժման զեկավարների ուղարկությունից վրիված չէր լինի Պրոպագանդայի դիմանում: բայց առանց այն էլ, մինույն է, Ստեփանոսի Հռոմում եղած լինելու և ըստ Փլորենտյան ժողովի դավանություն տված (բանագոր)

լինելու վկայությունը կար ժամանակակից Գուալտեր Արեաթինոսի մոտ („dedit obedientiam PP Paulo III. et fecit confessionem suam iuxta eam, quae fuerot faeta in Concilio Florentino tempore Eugenii IV“)⁷⁷. Նրա Հռոմում և իհանատանում գտնված լինելու մասին կային նաև լեհահայ հիշատակարաններ⁷⁸:

Այս հիման վրա լեհահայ նորագարձ զաղութի մեջ պետք է ստեղծված լիներ որոշ ավանդություն այն իմաստով, թե կաթոլիկությունը նորագում բան չէր ինչպես ընդհանական իրականության մեջ, նույնպես և լեհահայ կյանում: Թե լեհամիածնի կաթողիկոսներից մեկը, Ստեփան Սամասանցին, Հռոմում պապին հնագանդություն հայտնելուց հետո եկել էր լեհանայան արքայության յամանակական մահացել էր կյանում, ինչպես մկում էր երեալ ժամանակի գրիներից մեկի՝ Մշենի Օհանիսովի հիշատակարաններու և կ ժամանակի ու պարագաների անհրաժեշտությամբ ստեղծված այս ավանդությունը նույնպիսի անհրաժեշտությամբ է կմուծվեր նաև, որպես գրավոր արձագանք, լեհահայոց Տարեդրության մեջ, որը հենց այդ ժամանակներում ստանում էր իր վեռումական խմբացություն իր ատումա ձևի մեջ: Ահա աւապիսով մենք ուստումնավոր մուծում ենք համարում Կամենեցյան տարհառության տվալ հատվածը Ժէ դարի մոլեսանդ կաթոլիկ խմբագրությունների ձեռքով և ոչ երեք նույնինքն Հովհաննես քահանայի ձեռքով կատարված փոխառություն, որպիսի իրողություն անհնարին է ենթագրել, քանի որ մենք այժմ ստույգ գիտենք, թե Ստեփանոս Սալմասանցին չէր մահացել 1551 կամ 1552 թվականին կյանուն կլուզում:

Մենք նույնը կասենք նաև տապանառքի համար, որովհետեւ այսաեղ է նաև կլուզի տապանաբարի ծնունդը:

Այժմ կարող ենք հարց տալ իրավամբ, թե ինչո՞ւ տապանագիրը շահտի իններ դոնե նաև հայերին, կամ՝ այդ գամբանաբարի վրա կաթողիկոսն ինչո՞ւ պիտի քանդակվեր լատինական տարագով և ոչ թե հայկական, երբ մենք գիտենք, թե «հայր յալմամ չէին հնագանդեալը Ս. Աթոռոյն Հռոմայ», ինչպիս ասում է Ստեփանոս Ռոշքան, ինսեկով 50-ական թվականներին տեղի անցած ու-

74. Հռոմեական եկեղեցին սեփականացնելով կարողի—«կաթողիկե» (լատիներեն *catholicus*) անունը, որ նշանակում է «ընդհանրական», դրանով միշտ էլ շահագործել է և շահագործում է աշխարհի շրջ կողմերում գտնվող քրիստոնեա հավատացալների միամտությունը, այն իմաստով, որ իրը ինքը քրիստոնի «Ընդհանրական եկեղեցին» է, հնտեսարար Հռոմը էլ հանդիսանում է քրիստոնեության կենտրոնը:

75. «Թռնի միութիւն հայոց լեհաստանի ընդ եկեղեցին Հռոմվայ», Ս. Պատրիքուրգ, 1884, էջ 1—2:

76. «կամենից», էջ 128:

77. S.—E. Asseranus, „Catalogus“ օ'ւ, թ. 60.

78. Խոսքը վերաբերում է Մշեցի Ոհանիսովի հիշատակարաններին և այն հիշատակարաններին, որը 1562 միաւ տարեթիվով մուծված է Կամենեցյան տարեգրության մեջ, ինչպես տեսանք վերևում: Անշուշտ եղել նև ուրիշ հիշատակարաններ, որոնք չեն հասել մեզ:

թիշ խնդիրների մասին⁷⁰: Տարազի խնդիրը մանավանդ ծանրակշուն է: Ստեփանոս Սայմանոսից որքան էլ նախնական որոշ համաձայնության եկած լիներ Հռոմի հետ պավանական և ծիսական խնդիրների շուրջ, իր ակնկալած օգնության փախարեն դիցումներ անելով, և այդ զիշումների շարքին եթի նույնիսկ ընդունենք, որ նա պարտավորութած լիներ պաշտամունքի ժամանակ լատինական զգեստ կրելու— թե՛ն հավանական չէ այդ,— այնուամենայինիվ աներեակարիի է, որ նա զիս իր Աթոռը չկիրարարձած և Հռոմի կողմից առաջարկված պայմանների մասին իր ապդի համաձայնությունը շառած, սկսած լիներ ճանապարհին իսկ ինքնառութիւն կերպով զործագրել պայմանները: Առ դեռոսությունն այնքան է տեղին, որքան մեզ հայտնի է, որ, օրինակ, բայց վկատմթան Գուարտեր Արետինուի, նա զիս Հռոմում գտնված ժամանակ, երբ նրան առաջարկվել էր չուր խառնել բաժակի մեջ, նա դժվարացել էր ինքնարութիւնունի այդ և խոսացել էր, որ կաշխատի հետապայում այդ մասին ձեռք րիրել յուրայինների հավանությունը („et cum in Sacroficio Missie non misceret aquam vino, consensit, ut tunc ipse, quam sibi subiecti eisiscopoi XXVII. in futurum, iuxta morem Ecclesiae Romane, vino aquam miscerent“⁷¹): Ուրեմն և անհնարին է, որ նա յատինական եկեղեցական տարադի զործածության սկսած լիներ զեռ Հայաստան էլ շառած, ուստի նաև անհնարին բան էր, որ եթէ նույնիսկ նա կվովում մեռած և թաղված լիներ և եթի նույն ժամանակն էլ նրա հողակույտի վրա քար զետեղվեր, այդ քարի վրա հայերը նրան ներկայացնեին մի այնպիսի տարագով, որ նա չէր կարող կրել և չէր կրում: Եվ սա արգեն ինքնին բնական ապացույց է այն բանի, որ այդ տապանաքարը չի կարող վերաբերվել Ստեփանոս Սալմասուհուն և ԺԶ դարին:

Նյութական և հոգելոր մշակույթի ամեն մի հուշարձան, անկախ այն նպատակից, որին նվիրված է նա, իր ձևով արտահայտում է ա'յն ժամանակը և ա'յն միջավայրը, որոնց միջ ծնունդ է առնում: Այսպիս և վելով տապանաքարը կարող է արտադրությունը լինել միայն ու միայն նիկույան հեղաշրջման ավարտման շրջանի, ժէ դարի 60-ական թվականներից սկսած, երբ դադութիւն կաթոլիկացման գործին առանձին

70. «Կամենից», էջ 136:

71. S.—E. Assemanus, „Catalegus“ օւս. թ. 60. Հմմա. Հ. Զամշյան, «Պատմութիւն Հայոց», Հայտ. Դ. էջ 518:

թափ տրվեց նույնինքն լատինների ձեռով և բանի միջոցներով թույլ տրվի մի փառք մանրամասնությունների մեջ մտնել:

Նախքան 60-ական թվականները նիկոլ արքեպիսկոպոսի միջոցով կնրված միությունը պատիր ու խախուս էր համարվում լատինների կողմից և արդպես էլ էր իրականում: Միությունը իրական հմբերի վրա դնելու համար Հռոմի Պրոպագանդան էին հաստան է ուղարկում աշակե կոշիքած մի առաքելական միսիա, որը կվոլ է հասնում 1664 թվականի մայիսին: Առաքելությունը բաղկացած էր երկու թեատրնան կրոնավորներից, որոնցից մեկը հայերին արգեն ծանոթ և լավ հայերենագետ խաւացի է: Կղեմիս Գալանոսն էր, իսկ մյուսը՝ Քրանիսիցի է: Լուգովիկ Պիգուն, որը նույնպես հայերին սովորեց կարճ ժամանակում: Մրանց պաշտոնն էր պապական դպրանոց բանակ Լվովում 12 հայ աշակերտների համար և միաժամանակ հնակել, որ հայտարարված եկեղեցական միության սկզբունքները խստիվ կիրառվեն: Առաքելության հոգոր պաշտպաններ են հանդիսանում Մարիամ Լուկովիկին թագուհին, Լվովի լատին սրբագիտուկուու Տառնովսկիին, նրա ավագ սարկավագ Պատոկվսկիին, Կամենեցի վերատեսուչ քահանա Լեշշինսկիին, Գոմինիկյանների գավառապետ և Անտոնիոսը, պապական նվիրակ Պիգնատելլիին, որին հնատ հաշորդում են Մարիսկուտաբին, Նելլին և այլն, և որիշների Հռոմի Պրոպագանդան արքեկան 200 դաշեկան թոշակ է նշանակում նիկոլին՝ նրան հլու դործիր դարձնելու համար իր գործակալների ձեռքին: Շատ հնատարբարական են այս մասին այն գրավոր ընդարձակ տեղեկությունները, որ թողել են մենք նույնինքն և: Պիգուն իտալերեն լեզվով, և մի որիշ անանուն հնդինակ, որը հավանութեն նույն միսիայի անդամներից մեկն է եղել, լատիններն լեզվով⁷²: Հստայի հիշատակարանների՝ Գալանոսն ու Պիգուն սկսում են գործել տիրաբար: Նրանց առաջին գործն է լինում բռնությամբ և սպանալիքով հարկադրել, որ հայոց եկեղեցիներում պատարագը մատուցվի ջրախան բաժակով, բայց լատինական արարողության, որին սկզբում հանձնառու է լինում նիկոր ինքը միայն, չուզելով ստիպել որիշը ոչ որիշը: Սակայն բարողիչները նրանից պահանջում են ողի ի զուտի ածցէ զգործն սկրսեալ, արմատափակի հանցէ յեկեղեցաց զրա-

72. Այդ հիշատակարանների հայերեն թարգմանությունը տե՛ս «Եթովի միութիւն Հայոց Ահատանակ» շնորհացած Հայոց Ահատանակ, Ս. Պատերքութ, 1884:

73. Նույն տեղում, էջ 26:

զում հերետիկոսութիւնսն և զմոլորութիւնս, որ յայտնապէս հակառակ են ըստ միութեան նկեղեցւոյ, և եթէ ոչ հաւանացի՝ հարկիմք արգեօք զեկուցանել արքայական Մնծութեան՝ թէ կեղծօք է միութիւնսն⁸³: Եվ այս ժանր վեճը լուծվում է լատինների կատարյալ հաղթանակով, երբ 1665 թվականի հունվարին նրանք նիկոլի անունով և բանսդրանքի սպառնալիքով բոլոր քահանաներին հարկադրում են պատարագ մատուցել լատինական արարողությամբ⁸⁴: Այսուհետեւ պատարագի մեջ մուծվում է պապի անվան հիշատակությունը. անխնա սրբագրություններ են կատարվում Պատարագամատուցի մեջ, «Հաւատամթիւի մեջ, Ժայսմավուրբի մեջ, Ժամագրբի և Հաշտոցի և Հայսմավուրբի մեջ, Կատարվում են մի քանի ծիսական-սովորութական կարգի ուղղումներ և այլն, և այս բոլորը՝ նիկոլի միջոցով և անունով⁸⁵, «Ակսաբ այսպէս առ սակաւ սակաւ ուղղագրել բատ կարդի, որպէս և առնեմք իսկ մինչև ցայսօր, թէպէտ և չեն մեր ակնկալութիւնը աւարտելոյ զայն առանց հայերէն տպարանին,— զրում էր Պիդուն 1668 թվականին⁸⁶: Հալածվում էին այն անձեռը, որոնք հայոնի ընդդիմադիրներ էին հանդիսանում առաքելության գործունեությանը: Օրինակ՝ Հակոբ Բրոսկի քահանան, որ նիկոլի խորհրդականն էր, Տառնովսկու և Պյասկովսկու ջանքերով արտաքսվում է Լեհաստանի սահմաններից 1664 թվականին⁸⁷. Առաջնական խիստ հայածանքի է ենթարկվում էջմիածնի նիկոլակ Պողոս վարդապէտ Ելդուկիացին 1665 թվականին, հարկադրվելով հետանալ Լեհաստանից⁸⁸:

Այսպիս սկսվեց և այսպիս էլ շարունակվեց առաքելության գործունեությունը: Նիկոլը սահմանից միշտ էլ նրանց ակամա կամակատարը լինել, որքան էլ առերսոս լիներ այդ, այն վախով, «ով մի զիոնական կորուսցէ»⁸⁹: Գալանոսի մահցից հետո, որ տեղի ունեցավ 1666 թվականի մայիսին, Հոռոմից ուղարկվեցին հնադիման ուրիշներ, որոնց համար և առաքելության պաշտպանների շահակությամբ, Պիդուն շարունակեց գործել նույն հնանդով ու հաշողությամբ, ամեն ինչ անելով նիկոլի անունով ու հրամանով և ինքը մնարակ միշտ վարդուրի ետև, ժողովրդին չդրդուելու համար: Սակայն խորարածայնություններ երբեք էլ պակաս չէին

83. Նույն տեղում, էջ 37:

84. Նույն տեղում, էջ 38—39:

85. Նույն տեղում, էջ 39—40 և 165:

86. Նույն տեղում, էջ 41:

87. Նույն տեղում, էջ 37 և 164:

88. Նույն տեղում, էջ 44—45 և 46—49:

89. Նույն տեղում, էջ 168:

ըստ սովորականին նաև նույնինքն նիկոլի և Պիդուփի միջև, այնպէս որ, ի վերջո անհրաժեշտ էր գտավիլ մեկուսացնել նիկոլին ևս և պապական նիկորակ Մարիակուստիի հարթով 1668 թվականի հունիսմերիցին ուղարկվել էր նա Հռոմ⁹⁰, որից հետո աշխատում էին, որ այլևս նա չկերպառանար: Նիկոլի մասին Հռոմի Պրոպագանդայի կատարած ստուգումից պարզվում էր, որ կվովի լատինաց հոգևոր վարդությունում «գրեա թէ ամեններեան հաւան էին ընդ արգելումն, մանաւանդ բարեպաշտն Տարնովսկի, որոյ գնեսոն ի կուրծս եղեալ՝ պնդեաց, թէ անհրաժեշտ իցէ պահել արգելով զարքեպիսկոպոսն ի Հռոմ⁹¹: Իսկ մյուս կողմից Պիդուն և ընկերներն աշխատում էին ողի ըստ կարի արգել լիցին ժողովրդեանն, որպէս զի մի առաքեսցն թուղթս ի Հռովմ և խնդրեացն զդարձ արքեպիսկոպոսին: ...Վասն ալտորիկ օգնութիւնմբ փոխանորդին մեծաւ ճարտարութեամբ զգործն կատարեցին և բաղում անգամ խափան եղեն ժողովրդեանն, ցրուելով զդողովս նոցա զառանձնականն և զնոպարականն⁹²: Միայն 1674 թվականին է, որ նիկոլին թուղլատրվեց վիրադառնալ Լիհաստան, նրան հանձնառու զարձնելով միշտը պայմանների, որոնցով այլևս արմատապես ապահովվում էր կաթոլիկությունը Լիհաստանի հայերի մեջ:

Մեր կարծիքով առա այս ժամանակի և միջավայրի ծնունդ է այն ամրոցավին լուտինական հատկանիշներով դամբանաքարը, որ գտնվում է Լիլովում: Այն շրջանում, երբ Հռոմի լատին գործականներն իրենց ձեռքն էին առել լիհաստակի աղդային-հոգենոր գործերը, բանի տիրելն էին բոլոր եկեղեցիներին, տիրաբար տնօրինում էին ամեն ինչ՝ բացահայտ լատինացման ուղիով, մի կողմից համոզելով և ողոքելով ընդդիմացող ժողովրդին, իսկ մյուս կողմից բանաղատելով ու հալածելով նրան, այս շրջանում, ուղեմն, կաթոլիկական պրոպագանդան հզացնէ ու կենսագործել էր Լիլովի հայոց արքեպիսկոպոսական աթոռանիսաւ հկեղեցւու վիմական հուշարձան կանգնելու զաղափարը մի հուշարձան՝ անհրաժեշտ հատկանշերով, իր արած պայքարի զաղափարական հիմնավորման նախատեկով Ստեփանոս Սայմանցու անվան շրջար ստեղծված ավանդությունն ամբապնդելու և հավերժացնելու համար: Կոփիլէ էր քարը, նրա դրա գեղեցկորեն բանդակվել էր հայոց կաթոլիկոսի կերպարը լատինական եկեղեցական տարագով և փորվել էր լատինական փառավոր արձա-

90. Նույն տեղում, էջ 113 և 204:

91. Նույն տեղում, էջ 206:

92. Նույն տեղում, էջ 207:

սագրությունը: Արա պատմական հիմքերը նույն հիմքերն էին, որ ասացինք Կամենեցյան տարեզրության հատվածի առթիվ: Այս աել թվականը՝ 1551՝ արդեն առողջ համապատասխան է իր ազբյուրին՝ Մշեցի Օւանիսովիքի հիշատակարանին, մինչ Տարեզրության հատվածում թվականն էր 1552 թվականի հունվարի 14-ը, ի՞նչորև մի որեւ հաշվով, որ մեզ անհայտ է:

Եւհա թե ի՞նչ կարող էինք ասել կվովի տապանաքարի և Արա հետ միասին Կամենեցյան տարեզրության խնդրո առարկա հատվածի ծագման մասին, այն բանից հետո, երբ մի շարք փաստեր մեզ ասում են, թե ի՞րավական թվականներին Ստեփանոս Սալմաստեցին չեր մահացել կվովում և չեր թաղվել այնտեղ:

Այս ժմիման վրա, Ստեփանոս Սալմաստեցու անունով կվովում գտնվող տապանաքարը հանդիսանում է պատմական կեղծիք⁹³, որը շփոթության ազբյուր է եղել մեր օրերում հայ պատմագիտության մեջ Ստեփանոս Սալմաստեցու կենսազրության համար, հայ ազատազրական շարժումների նախնական շրջանի պատմության կապակցությամբ: Այդ պատմական կեղծիքի առաջին զո՞ր հենց լիճանայոց ժամանակագիրն է եղել Ժիշ գարի առաջին կեսին: Ստեփանոս Ռոշբան, որ ամբողջովին դրավոր ազբյուրների հիման վրա է կազմել իր համառոտ ժամանակագրությունը, այս տապանաքարից բացի ոչ մի հենարան չի ունեցել Սալմաստեցու մասին իր հազորդած տեղեկությունների համար, ինչպես ասացինք արդեն, և այս հանդամանքը նաև ցույց է տալիս, թե այդ ժամանակ կվովից արդեն դադիմած է եղել Մշեցի Օհանիսունի ձեռագիրը, որից անշուշտ օգտված լինենք նա ոչ միայն Սալմաստեցուն վերաբերող տեղեկություններում, այլ նաև Գրիգոր Վարագեցուն, եթե տեսած լինենք ալդ:



Ամփոփելով մեր ասածները, Ստեփանոս Սալմաստեցու 1551 կամ 1552 թվականին կվովում մեռած և թաղված լինելու խնդրի կապակցությամբ առաջ քաշված ուղղակի և հարակից հարցերի քննությամբ, մինք ստանում են հետեւյալ եղբակացությունները:

93. Պրոֆ. Հ. Աճառյանը ժամանակին շտապեց մեր այս կարծիքի արձագանքը լինելու «սխալը» մեր է, թե քարերն չեն կեղծում բառերով (տե՛ս Արա «Հայոց անձնանունների բառարան», Հատ. Դ, Երևան, 1948 թ., էջ 674), առանց հիշատակելու մեր անունը:

1. Ստեփանոս Սալմաստեցին Հոռմից վերադարձին չի մահացել կվովում 1551 կամ 1552 թվականին, այլ հրշատակվում է որպես հայոց կաթողիկոս, ինչպես 50-ական, այնպես և 60-ական թվականներին:

2. Այն տապանաքարը, որ գտնվում է կվովում Արա անունով, հատապայի դործ է, մի կեղծիք, որի հեղինակներն անվանապես անծանոթ են մեզ: Բայց՝

3. Նկատի առնելով այդ տապանաքարի ներկայացրած համանշերը, որոնք զուտ լատինական են, գտնվում ենք, որ կեղծիքի հեղինակները Ժիշ գարի երկրորդ կեսում Հոռմից կենաստան ուղարկված՝ Պրոպագանդայի լատին գործակալներն են և կամ նրանց հայագիր գործակալները:

4. Ստեփանոս Սալմաստեցին և Ստեփանոս Արքնէցին միևնույն անձն է:

5. Ստեփանոս Սալմաստեցին Հոռմ զնալիս իր հետ ունեցել է հետեւյալ անձերին. Զաքարիա եպիսկոպոս, Գավիթ վարդապետ, Գրիգոր վարդապետ Վարագեցի, որ Ստեփանոսի աշակերտն էր, և կուսիկ սարկադագ:

6. Ստեփանոս Սալմաստեցին 1552 թվականի վերջերին գտնվում էր Անհաստանում, այնպես որ նույն տարվա Հրեշտակապետաց տոնին, որ նոյեմբերի 19-ին էր ընկնում, նա գալիս է Կամենեց, հայ զաղութին այցելելու, ամսենեղ մնում է մինչև Մննդան տոնը, այսինքն՝ 1553 թվականի հունվարի 6-ը, որից հետո զնալով կվով, նորից է վերադառնում Կամենեց:

7. Ստեփանոս Սալմաստեցին 1555 թվականին դեռ, —և կամ, եթե երբեմից հեռացել էր այնտեղից՝ նորից, — գտնվում էր կվովում, որտեղ նա առաջնորդության թափուր աթոռի համար նույն թվականի ապրիլի 14-ին եպիսկոպոս է ձեռնադրում իր աշակերտ Գրիգոր վարդապետ Վարագեցուն:

8. Ստեփանոս Սալմաստեցին, կենդանի լինելով 1562 թվականին և շարունակելով իր կաթողիկոսությունը, որպես աթոռակից Միքայել Անբատացու, չեր կարող անմասն եղած լինել այդ թվականին Միքայելի ղեկավարությամբ կատարված ձեռնարկման մեջ, հետեւյարար հայ աղատագրական շարժման առաջին երկու ձեռնարկումները պետք է օրդանապես կապված լինենք միմյանց հետ, հանդիսանալով մեկը մյուսի շարունակումն ու զարգացումը, Ստեփանոս Սալմաստեցու ոլխավորությամբ և մասնակցությամբ:

